

ԿԱՐԾԻՔ

Ռուզան Լևոնի Մուսեյանի

«Հագուստը որպես նշանային համակարգ հայ և բրիտանական լեզվամշակույթներում» Ժ. 02.02.- «Ընդհանուր և համեմատական լեզվաբանություն» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ներկայացրած ատենախոսության մասին

Լեզվաբանության միջգիտակարգերը գնալով ավելի լայն ընդգրկում են ստանում, ներառելով պատմության, մշակույթի և ընդհանրապես, մարդու գործունեության տարբեր ոլորտներ: Պատճառը մեկն է և ակնհայտ. լեզվական դրսևորում ունի մարդկային ողջ քաղաքակրթությունը, մշակույթը, գիտությունը, ամբողջը՝ ինչ ճանաչելի է, և անգամ, անիմանային սահմանակցող հավատքի ոլորտը:

Կիրառական գիտությունների պահանջով, մյուս կողմից, լեզվի նյութը դարձել է նաև հանրության, մշակույթի, անձի ինքնության և ինքնարտահայտման եղանակների մասին գիտելիքի շտեմարան, և լեզվաբանական տարաբնույթ մեթոդներով, նաև այլ գիտակարգերի օգնությամբ մարդիկ սովորել են գտել և ըստ կարիքների վերակառուցել և օգտագործել դրանում փաստական և արժեքաբանական տեղեկությունը:

Այս իմաստով է, որ Ռ. Մուսեյանի հետազոտությունը որոշակի նշանագիտական և ճանաչողական արժեք ունի և թեմայի նորույթը պայմանավորված է հագուստի լեզվական միավորների՝ մեզանում ուսումնասիրված չլինելու փաստով:

Ատենախոսության նպատակը մշակութային այդ կարգի առարկան հագուստի բառիմաստային և նշանագիտական բովանդակության համեմատությունն է երկու՝ հայ և բրիտանական լեզվամշակույթներում:

Աշխատանքի տեսական հիմքում են Ֆ. դը Սոսյուրի, Չ.Պիրսի, Ռ. Բարտի, Ռ. Յակոբսոնի, Վ. Հոմբոլդտի, Ա. Գրեյմասի, Ջ. Լակոֆֆի և Մ. Ջոնսոնի դասական աշխատությունները:

Ամփիջական քննության նյութը տարբեր աղբյուրներից հավաքված նկարագրական ծավալուն տեղեկություններ են և համատարած ընտրանքի մեթոդով բառարաններից գտված հագուստի հայերեն և անգլերեն բառիմաստային ցանկն է: Վերջինը ներառում է այդ հասկացույթի անմիջական և հարակից բառային բաղադրիչները, դարձվածային միավորներ: Զանակական առումով դրանք մոտավորապես հավասարեցված են. սա կարևոր հանգամանք է, որ ապահովվի համադրվող արդյունքների համեմատելիությունը:

Նպատակի, հայեցակարգային շրջանակի և քննության նյութի սահմանումից հետո Ռ. Մուսեյանը ներկայացնում է իր լուծելիք խնդիրները, որոնք միաժամանակ ներկայանում են որպես գործողության պլան և ատենախոսության կառուցվածք:

Նախ, նա խնդիր է դրել սահմանել իր ատենախոսության տեսական շրջանակը, ապա ներկայացրել է հազուստի և հարակից պարագաների խորհրդանշական և իմաստաբանական համակարգը: Այնուհետև, հեղինակը զուգադրաբար վերլուծել է այդ հասկացության լեզվական կարգայնացման միջոցները հայերենում և անգլերենում: Բառային միավորների քննության ավարտից հետո հեղինակն անցնում է զգեստի գունային խորհրդանշման և հազուստ արտահայտող բառերով դարձվածային միավորներին, դրանցում նույնպես վերհանելով մշակութային և սոցիալական ինքնության նշանային վերլուծությանը:

Այսպիսով, 225 էջ կազմող շարադրանքում հստակորեն տարանջատված են նշված խնդիրներով պայմանավորված չորս գլուխներ, եզրակացություն, գրականության ցանկ և երկու հավելված:

Ատենախոսության լեզվական նյութը վերլուծության է ենթարկված մի շարք մեթոդներով: Դրանց ընտրությունը բխում է նախ հետազոտության նպատակից, ապա և նյութի բնույթից: Ինչպես արդեն նշեցինք, կիրառվել են բառարանային համատարած ընտրանքի, նշանագիտական, ճանաչողական փոխաբերության, բաղադրիչային, զուգադրական, ստուգաբանական մեթոդները, կան նաև քանակական և վիճակագրական տվյալներ:

Ատենախոսության առաջին գլուխը ներկայացնում է նշանագիտության ընդհանուր դրույթները, պատմում է դրա կարկառուն դեմքերի և նրանց ունեցած ներդրման մասին: Անդրադարձ է արված նշանագիտության կապին այլ գիտակարգերի հետ:

Հաջորդ ենթագլխում հեղինակը ծանրանում է ճանաչողական նշանագիտության վրա, մի բան, որ համարում ենք այս ատենախոսության արժանիքներից մեկը: Հանգամանալի կերպով ներկայացված են Սոսյուրի, Պիրսի հաղորդակցական-նշանագիտական հայացքները, հակադրելով դրանք Էկոյի՝ նշանի, որպես հանրային պայմանականության գաղափարին:

Տեղին է նշանակերտման կապը փոխաբերման և փոխանվանման հասկացությունների հետ, քանի որ նշանը հենց առարկայական իրականության խոսքային փոխաբերումն է որ կա:

Երկրորդ գլուխը ես կանվանեի հազուստի փիլիսոփայություն, քանի որ առանձնահատուկ խնամքով և հաճույքով գրված այս գլխում հազուստ արտիֆակտը դիտարկվում է Մասյովի բուրգի պրիզմայով: Հաջորդ ենթագլխում առարկայական հազուստի խորհրդանշական իմաստներն են քննարկվում, բերվում են օրինակներ

գեղարվեստական գրականությունից, վերլուծելու համար ոչ այնքան հազուստ արտահայտող լեզվական միավորները, որքան դրանց հենց առարկայական բովանդակությունը: Առավել ակնհայտ է առարկայական հազուստի խորհրդանշանային բովանդակության վրա կենտրոնացումը տարազների և դաջվածքների մասին ենթազուլիսներում (2.2.1.-2.2.2): Իրականում այս հաջորդականությունը նկատելու փաստը գովելի է և հետաքրքիր, և կարող է հետագայում զարգացվել, եթե հեղինակը որոշի խորանալ մարդու արտաքինի նշանագիտության մեջ:

Յետազոտական աշխատանքների գնահատման իմ տասնամյակների փորձից եզրակացրել եմ, որ ցանկացած հետազոտություն, որոշակի գիտելիք ստեղծելուց զատ, իր հետ բերում է չիրագործած և բաց թողնված հնարավորությունների մի շարք, որոնց դրական կամ բացասական գնահատականը կախված է այդ հնարավորությունների արժեքի և դրված նպատակի հարաբերակցությունից: Թեման հաճախ է հետազոտողին գայթակղում շեղվել և խորանալ հարևան հարցերի մեջ, «թաքցնելով» իր պարունակած ակնհայտորեն կարևոր մշականյութ: Դաջվածքային տեքստերի տիպաբանությունը, կարծում եմ, հենց այդ գայթակղություն է: Այն կարող էր առանձին միջգիտակարգային քննության առարկա դառնալ, քանի որ ավելի շատ հարում է լայն իմաստով ինքնության հատկանշմանը՝ պիտակավորման/ բրենդավորման հոգեբանական միանգամայն ժամանակակից միջգիտակարգին, որը թեմային մոտ կանգնած, բայց թե՛ ըստ էության, և թե՛ ըստ իմաստի առանձին՝ «հարևան» թեմա է: Դաջվածքները տևականորեն, եթե ոչ ցմահ, դառնում են **անձի** ինքնարտահայտման մաս, մինչդեռ տարազներն ազգային **մշակույթի** ցուցիչներն են, որոնք զլրբալացման հոսանքի տակ նախ կորցնում են իրենց կիրառական, ապա աստիճանաբար՝ նաև սիմվոլիկ նշանակությունը: Դրանց փոխարինելու են գալիս այլ զգեստային նկարագրիչներ, որոնց մասին կասվի ստորև: Ինչ վերաբերում է հազուստի ոճավորման նշանագիտական արժեքին, ապա նկատենք, որ ոճը խիստ անձնավորված և անհատական հատկանիշ է, և որպես այդպիսին, նշանագիտական ընդհանրացման համար մի քանի աստիճան առավել բարդ և փոփոխական ցուցիչ է՝ կախված անձը բնութագրող մի երկար շարք գործոններից՝ բնախոսական, բնակլիմայական, սոցիալական, տարիքային, հոգեկան, մասնագիտական և այլն:

Ցանկալի կլիներ այս դիտարկումները տեսնել երկրորդ գլխի եզրակացության մեջ. այն, ի դեպ, ակնարկում է հեղինակի բաց թողած ակնհայտորեն կարևոր և հետաքրքիր մի հնարավորության մասին: Նա գրում է. «Այսպիսով, հազուստը՝ ստեղծվելով որպես առաջնային անհրաժեշտության տարր, օգնում է բավարարել մարդու տարատեսակ պահանջմունքները և որպես յուրօրինակ նշանային համակարգ՝ գործում է ինչպես տարագի ու ավանդական զարդարանքի, այնպես էլ զլրբալացման և

«համազգեստավորման» ներկայիս պայմաններում»: Խոսքը «համազգեստ»-ի նշանագիտության մասին է, որին արժեր, որ հեղինակը ուշադրություն դարձներ, այն դիտարկեր կորպորատիվ-մասնագիտական ինքնության դրսևորման տեսակետից: Վստահ եմ, որ նման անդրադարձը կամբողջացներ հագուստի նշանագիտական կարգայնացման պատկերն աշխատանքում:

Գովելի է, որ հեղինակը հանձն է առել նորաբանությունների ֆիլտրումը՝ բարդ խնդիր, որի լուծմանը նա հասել է հարյուրավոր տեքստեր կարդալով: Դրանց համակարգելն արդեն իսկ մի ատենախոսության թեմա է. ևս մեկ հնարավորություն, որ կարելի է հենանշել նրա հետագա գործունեության համար: Հուսանք, հաջորդ անդրադարձին, թեկուզ առայժմ անզերենի համար հեղինակը կնախընտրի օգտվել առցանց թվային շտեմարաններից, ասենք, British National Corpus-ից, հագուստի կարգայնացման ժամանակագրությունը և մի շարք այլ պարամետրերով տվյալներ ստանալու համար:

Սկատվել է նաև, որ հայերենի բառացանկից դուրս են մնացել մի շարք բառեր, որոնք կարող էին փոփոխել համեմատվող բառացանկերի քանակական հարաբերակցությունը: Այսպես, բառիմաստների վերլուծության մեջ ներառվել են հնացած և կամ ռուսերենի ազդեցությամբ բառարանում գրանցված սխալ բացատրություններ (եջ 83) հագուստը՝ էլեկտրական պարագաներ, կահավորանք (экипировка) որոնք կարելի էր ուղղակի չներառել համեմատության մեջ, հայերենում այդ իմաստների բացակայության պատճառով: Մինչդեռ, փոխարենը բառացանկերում չտեսանք քուրծ/քուրջ/քրջ, քրջ ու *փալաս*, չուլուփալաս, ցնցոտի, լաթեղեն, *փալաս*-փուլուս, քուրջ, ձորձ, *չուլ*, գրգյակ, ճաթ-ճաթ, բառերը, որոնք ներառված էին Էդ. Աղայանի (Էդուարդ Բագրատի Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան Երևան, «Հայաստան», 1976) բառարանում: Սկատենք, հեղինակն այս բառային միավորները հանդիպում ենք հեղինակի դարձվածային միավորների իր վերլուծության մեջ:

Անդրադառնալով դարձվածային միավորների իմաստաբանությանը, նշենք, որ վերլուծությունը լեզվաբանական տեսանկյունից կշահեր, եթե այն արվեր ոչ թե կարծրատիպային խորհրդանշման, այլ կոնկրետ փոխաբերական և փոխանվանական շարադասման տեսանկյունից, այսինքն՝ կազմվեին հագուստի փոխանվանական զուգադրական ցանկեր, որոնք արժեքավոր կլինեին որպես թե բնական և թե մեքենական թարգմանության տվյալներ: Այս մասին ևս հուշումը գտնում ենք հենց ատենախոսության մեջ, համարժեքային համեմատությունը կատարյալ կլիներ, եթե նշվեր օրինակ, որ նույն 84-րդ էջի վրա հանդիպող անզերեն wardrobe բառի փոխանվանական կիրառությունը հայերենում էլ է պատահում: Օրինակ, «Ջինսերը

փոխարինել տաբատներով ինչպես ձևավորել թրենդային գգեստապահարան» <https://168.am/2019/07/08/1144538.html>, կամ «Օրերս ՉԼՄ-ների ներկայացուցիչները կենտրոնացել են Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելի գգեստապահարանի վրա: ... Նրան լեռնային արշավի ժամանակ նկատել էին 5-րդ տարին անընդմեջ նույն հագուստով շրջելիս:» <https://www.1in.am/2185894.html>, կամ «Նորածն վերարկուներն աշուն/ձմեռ գգեստապահարանի must have են:» <https://www.brandsmarket.am>

Ընդունված կարգով թերությունների անդրադարձին, չկարողացանք խուսափել գրականության ցանկի մեջ առկա մեկ-երկու բացթողում նկատելուց կան աղբյուրներ, որոնք հղված են տեքստում, բայց չեն հիշատակված գրականության ցանկի մեջ (Սոսյուր, Jensen):

Նշված թերությունները չեն նվազեցնում ատենախոսի կատարած աշխատանքի գիտական և գործնական արժեքը: Ավելին, դրանք մատնանշում են թեմայի ընդլայման և ավելի խորը քննության հնարավորությունը, որից, հուսանք, հետագայում կօգտվի հեղինակը:

Սույնով ամփոփելով Ռուզան Մուսեյանի «Հագուստը որպես նշանային համակարգ հայ և բրիտանական լեզվամշակույթներում» ատենախոսության գրախոսումը, հավաստում եմ, որ աշխատանքը համապատասխանում է Ժ. 02.02.- «Ընդհանուր և համեմատական լեզվաբանություն» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի ատենախոսությանը ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է իր հայցած գիտական աստիճանը շնորհելուն:

28.11.22թ.

Գայանե Ռազմիկի Հովհաննիսյան
Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

բ.գ.դ. Գ. Հովհաննիսյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ԲԴՀ գիտքարտուղար



Հ. Փիլավջյան